ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ

# ՍՈՒՐԲ ԵՂԻՇԱՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԱՆՑ, ՉՈՂԱ ԵՐԿՐԻ ԵՎ ԱՂՎԱՆԻՑ ԱՇԽԱՐՀԻ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ

Հ. Ս. ՍՎԱՋՅԱՆ

Քրիստոնեության մասին առաջին պատկերացումները Աղվանքում կազմվել են սբ. Եղիշայի՝ Քրիստոսի առաքյալ սբ. Թադեոսի աշակերտի քարոզներով: Բոլոր ուսումնասիրողները, անխտիր, ընդունում են այս ճշմարտությունը և իրավացիորեն Եղիշային են համարում Աղվանքի անդրանիկ լուսավորիչը:[1] Բայց Աղվանից աշխարհի իրական տարածքի հանիրավի ընդարձակման պատճառով, որի ժամանակ նրանում ներառվում են. հյուսիսից՝ Չողա կամ Մասքթաց երկիրը (որտեղից սկսել էր իր գործունեությունը Եղիշան), իսկ հարավից՝ Ուտիքը (ուր նա ավարտել էր քարոզչությունը՝ նահատակությամբ), Եղիշայի գործունեության ողջ աշխարհագրական տարածքը միանշանակ դիտվել է իբրև Աղվանք:[2] Մինչդեռ հունա-հռոմեական ու վաղ միջնադարյան հայկական աղբյուրների տեղեկությունների համաձայն, բուն Աղվանքի սահմանները, մասնավորապես Եղիշայի գործունեության ժամանակաշրջանում, և, ընդհանրապես, մ.թ. Ի-մ. թ. V դ. կեսերին (նրա պետականության շրջանում), հյուսիսում ձևավորել են Կովկասյան Գլխավոր լեռնաշղթայի հարավային՝ Կերաունյան ճյուղը և Սումգայիթ գետը, արևելքում՝ Կասպից ծովը, հարավում՝ Կուր, իսկ արևմուտքում՝ Ալազան գետերը:[3] Միանգամայն պարզորոշ նկատվում է, որ նրա պատմական սահմաններից դուրս են գտնվել ինչպես Ուտիքը, այնպես էլ Չողա (Մասքթաց) երկիրը:[4]

---

[1] *Մակար եպիսկոպոս Բարխուդարեանց*, Պատմութիւն Աղուանից, հ. Ա.,Վաղարշապատ, 1902, էջ 51, 58 և հաջ., *նույնի՝* Աղուանից երկիր եւ դրացիք, (Մէջին Դաղստան), Թիֆլիս,1893, էջ 82: *Р.Б. Геюшев*, Христианство в Кавказской Албании, Баку, 1984, с. 26, *Ф. Мамедова*, Политическая история и историческая география Кавказской Албании (IV в. до н. э.—VIII в. н. э.), Баку, 1986, с. 217 и сл.

[2] Նույն տեղում:

[3] Մանրամասն տե՛ս *Հ. Ս. Սվազյան*, Աղվանքը սկզբնաղբյուրներում և պատմական գրականության մեջ (համառոտ պատմաաշխարհագրական ակնարկ) (Բանբեր Հայաստանի արխիվների, 1989, №2, էջ 143-161):

[4] Հանուն ճշմարտության ասենք, որ թե՛ Ուտիքը և թե Չողան ինչ-որ ժամանակահատվածում եղել են Աղվանքի կազմում, բայց դա անհամեմատ ուշ էր, քան Եղիշայի գործունեության ժամանակաշրջանն էր: Ուտիքի համար նման քաղաքական կացություն առաջացավ IV դ. 60-ական թթ., երբ օգտվելով Հայաստանի ժամանակավոր թուլացումից, Աղվանքի Ռտնայր թագավորը հարձակվում ու գրավում է նրա Ուտի-Առանձնակ, Գարդման ու Շակաշեն գավառները և Կողթը,

Բացարձակապես սխալ է Եղիշայի գործունեության տարբեր տեղավայրերը համարել մի երկիր՝ Աղվանք և դրանով տեղի տալ մի նոր թյուրիմացության: Ավելին. սղբյուրների և, առաջին հերթին, հայ պատմիչ Մովսես Կաղանկատվացու հաղորդումների քննությունը բերում է այն համոզման, որ սբ. Եղիշան Աղվանքում (և Չողում) հայտնվել էր հանգամանքների բերումով և նրա նպատակակետը Հայոց հյուսիս-արևելյան կողմերն էին, Ուտիք-Արցախյան աշխարհը, որտեղ էլ նա գործեց ու նահատակվեց:

Համաձայն սկզբնաղբյուրների տվյալների, Եղիշան մինչ Չողում ու Աղվանքում քարոզչական գործունեություն ծավալելը, նման աշխատանք կատարել էր Հայաստանում: Լինելով սբ. Թադեոսի աշակերտը՝ նա նրա հետ եկել էր Հայաստան և օգնել նրան նոր հավատի սերմերը ժողովրդի մեջ տարածելու գործում:

Դառն էին քրիստոնյա առաջին նվիրյալների ճակատագրերը: Նրանք մշտապես ենթարկվում էին հետապնդումների ու հալածանքների և հաճախ հատուցում կյանքով: Այդպես եղավ և առաջին քարոզիչներից սբ. Թադեոսի հետ, որն իր մի քանի աշակերտների հետ հայոց Սանատրուկ թագավորի (88-110թթ.) հրամանով նահատակվում է: Փրկվում է Եղիշան, որն էլ ուսուցչի մարտիրոսությունից հետո վերադառնում է Երուսա-

---

որը Արցախի գավառներից էր, և միացնում Աղվանքին (տե՛ս *Փաւստոսի Բուզանդացւոյ* Պատմութիւն Հայոց, բնագիրը Ք. Պատկանյանի, թարգմ. և ծանոթ. Սա. Մալխասյանցի, Ե., 1987, էջ 320-322): Բայց և նշենք, որ այդ կացությունը տևում է մի շատ կարճ ժամանակամիջոց, հազիվ տասը տարի, որից հետո, նույն դարի 70-ական թվականներին հայոց սպարապետ Մուշեղ Մամիկոնյանը այդ գավառները հետ է նվաճում և վերականգնում Աղվանից ա Հայոց միջև եղած դարավոր-պատմական սահմանը, որն անցնում էր Կուր գետով (տե՛ս նույն տեղում): Այնուհետև, մ. թ. V դ. կեսերին (461թ.) պարսից արքունիքը Անդրկովկասում վարած իր նվաճողական քաղաքականությանը համապատասխան, Աղվանքում վերացնում է պետականությունը, երկիրը վերածում մարզպանության և Ուտիքը Արցախի հետ միասին, նաև Չողը, բռնակցում է նորաստեղծ Աղվանից մարզպանությանը՝ դրանք դարձնելով այդ նոր վարչական միավորի բաղադրիչ մասեր [տե՛ս *Հ. Ս.Սվազյան*, Աղվանից, մրազպանության կազմավորման հարցի շուրջը (Պատմա-բանասիրական հանդես, 1979, № 4, էջ 210 - 218)]: Դառնալով սոսկ Աղվանից մարզպանության մասեր՝ նշված երկրների վրա տարածվում է մարզպանության ընդհանուր անվանումը՝ «Աղվանք», որը, սակայն, դրանց համար ուներ միմիայն աշխարհագրական իմաստ, որովհետև ոչ մի օրգանական կապ չկար մարզպանության տարբեր բաղադրիչների միջև: Մասնավորապես, Ուտիքն ու Արցախը ամբողջովին պահպանում են իրենց հայկականությունն ու ներքին ինքնավարությունը:

Աղվանից մարզպանությունն էլ երկար չի գոյատևում: VI դ. կեսերից այն տրոհվում է առանձին մանր իշխանություններ, որի ժամանակ Ուտիքն ու Արցախը Կուրի հարավում ստեղծում են իրենց միասնական իշխանությունը՝ Առանշահիկների գլխավորությամբ [տե՛ս *Հ. Մ. Սվազյան*, Աղվանքը և Սիհրանյան տոհմը (ՀՍՍՀ ԳԱ Լրաբեր հասարակական գիտությունների, 1980, № 9, էջ 91-101)]: Իսկ Չողը իր շրջակա տարածքով դառնում է Կուրի հյուսիսում ստեղծված ինքնուրույն իշխանություններից մեկը: Ինչպես տեսնում ենք, Ուտիքի ու Չողի քաղաքական կացության նման ժամանակավոր փոփոխությունները ուսումնասիրողներին թույլ չեն տալիս դրանք բոլոր ժամանակներում դիտել Աղվանքի կազմում և այլազան երկրներում տեղի ունեցած պատմական իրադարձությունները կենտրոնացնել մեկ երկրում ու այդ երկիրը ներկայացնել որպես Աղվանք:

ղեմ: Այստեղ, տեղի առաջին հայրապետի՝ Տեառնեղբայր սբ. Հակոբի կողմից ձեռնադրվում է եպիսկոպոս և ուղարկվում Արևելք՝ այս անգամ ինքնուրույն, քարոզչական աշխատանքի: Եղիշայի սկզբնական շրջանի գործունեության մասին Մ. Կաղանկատվացին գրում է, որ Թաղեոս առաքյալը «եկեալ ի Հայս՝ յԱրտազ[5] գաւառ. անդ առնու վախճան մարտիրոսութեան ի Սանատրկոյ արքայէն Հայոց:

Եւ աշակերտ նորին սուրբ Եղիշայ դառնայ յԵրուսաղէմ և պատմէ զտենչալի նահատակութիւնն առաքելակցացն նորա: Անդանօր յազդմանէ սուրբ հոգւոյն ձեռնադրի Եղիշայ ի ձեռաց սրբոյն Յակովբայ՝ եղբօրն Տեառն, որ էր առաջին հայրապետ Երուսաղէմի: Եւ վիճակ առեալ իւր զարևելս՝ ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ... »[6]:

Ստանալով նոր նշանակում՝ Եղիշան ճանապարհվում է «Արևելք»: Դուրս գալով Երուսաղեմից՝ նա անցնում է Պարսկաստան, ապա, հավանաբար, Ատրպատականի վրայով,[7] մտնում Մասքթաց երկիր՝ Չող (Չոր, Ճոր), որտեղից էլ մեկնում է Ուտիք: Այստեղ նրա առաջին հանգրվանը լինում է Սահառ քաղաքը, ուր նա հասնում է իր երեք աշակերտներով: Խմբին կրնկակոխ հետևում են վերջիններիս հարազատները, որոնք ձգտում են հետ վերադարձնել նրանց: Անօրեններին հաջողվում է երկուսին համոզել և տանել իրենց հետ,իսկ երրորդին, որը չի ցանկանում լքել իր ուսուցչին, սպանում են: Այս դեպքից հետո Եղիշան գնում է Ուտիքի Գիս ավանը: Գիսում նրա գործունեությունը ավելի երկարատև և արդյունավետ է լինում: Այստեղ նա հասցնում է նույնիսկ եկեղեցի կառուցել՝ այս կողմերի առաջին եկեղեցին: Գիսում է տրվում նաև քրիստոնեական կրոնի առաջին արարողակարգը՝ պատարագը: Եղիշան, գրում է Կաղանկատվացին, «Ճանապարհ արարեալ յԵրուսաղէմէ ընդ Պարսս մտանէ ի Մասքութս, խոյս տուեալ ի Հայաստանեայցն: Սկիզբն առնէ քարոզչութեան ի Չողայ և ի տեղիս տեղիս զբազումս աշակերտեալ՝ ծանոյց զփրկութիւնն:

Անտի եկեալ յՈւտի գաւառ՝ ի Սահառն քաղաք երիւք արամբք աշակերտելովք,[8] որոց հարազատք անօրէնք ոմանք զկնի եկեալ՝ մի յաշակերտելոցն ընկալաւ ի նոցանէ զնահատակութեանն վախճան:[9] Եվ երկուցն թողեալ զերանելիս Եղիշայ գնացին զկնի ամբարիշտ և խողխողիչ արանցն: Իսկ սուրբ հայրապետն եկեալ ի Գիս՝ կանգնեաց եկեղեցի և մատոյց

---

[5] Արտազը հայոց Վասպուրական նահանգի գավառներից էր: Այստեղ էր գտնվում Մակու բերդաքաղաքը, որի պատճառով ուսումնասիրողները, երբեմն, դրանց նույնացնում են միմյանց հետ: Ֆ. Մամեդովան, Արտազ-Մակուն չցանկանալով համարել հայկական գավառ,այն տեղադրում է Ատրպատականում և գրում, թե դա, իբր, արվել է հայկական աղբյուրների ցուցումներով (տե՛ս *Ф. Мамедова*, նշվ. աշխ., էջ. 222): Իհարկե,նա չի նշում և ոչ մի աղբյուր,մի բան, որ ցանկության դեպքում էլ չէր կարող անել, քանի որ այդպիսի աղբյուրներ չկան:

[6] *Մովսես Կաղանկատուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի, քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի, Ե., 1983, էջ 10:

[7] Հմմտ. *Է. Դանիելյան*, Հայաստանը առաքելական քարոզչության ժամանակաշրջանում (քարտեզը), Ե., 1994:

[8] Կարծիք կա, որ Եղիշայի այս աշակերտները, որոնց հետևից ընկել էին նրանց հարազատները,աղեղացիներ էին: Տե՛ս *Р. Б. Гекошев*, նշվ. աշխ., էջ 26:

[9] Անհայտ է, թե որտեղից է Մ. Բարխուդարյանցը տալիս նույնիսկ նրա անունը՝ Վլաս (տե՛ս *Մ. Բարխուդարյանց*, Աղուանից երկիր..., էջ 254):

զանարիւն պատարագ...»[10]: Ավարտելով իր առաքելությունը Գիսում՝ Եղիշան փոխադրվում է Զերգունի կոչվող դաշտը՝ այնտեղ գտնվող բնակավայրերում քարոզչական աշխատանքներ տանելու համար: Դա մի շատ ծանր խնդիր էր, որովհետև, ինչպես ներկայացնում է Կաղանկատվացին, Զերգունի դաշտը դիցամոլ կռապաշտների զոհագործումների վայր էր, կարելի է մտածել՝ հեթանոսական կրոնի կենտրոնատեղիներից մեկը: Դժվար չէ պատկերացնել, թե ինչպիսի թշնամանքով և ատելությամբ են Եղիշային դիմավորել այդ կրոնի սպասավորները, որքան արգելքներ հարուցել ու հալածանքների ենթարկել սրբին: Պատահական չէ, որ հենց այստեղ՝ Զերգունի դաշտում է նա նահատակվում և Հոմենք անվանվող վայրում նետվում մի փոսի մեջ: Այս ամենի մասին ևս պատմում է Մ. Կաղանկատվացին. «Եվ անտի անցեալ ընդ դաշտակն Զերգունի՝ ի տեղի զոհարանի դիցամոլ կռապաշտիցն. անդ էառ զնահատակութեան պսակն: Եվ անհայտ իմն է, եթե յորմէ իմեմնէ եղաւ ելք իրացն[11] և անդէն ի գուր մի մահապարտաց ընկեցաւ պատուական նշխարքն և ծածկեցաւ ի տեղւոջն, որ կոչի Հոմէնք, բազում ժամանակս»[12]:

Նույն պատմությունն է անում և, որպես Եղիշայի առաքելական գործունեության տեղիք, նույն վայրերն է մատնանշում նաև մեր մյուս հայ պատմիչը՝ Կիրակոս Գանձակեցին:[13]

Ինչպես տեսնում ենք բերված ընդարձակ քաղվածքից, Կաղանկատվացին (առավել ևս նրանից օգտված Կ. Գանձակեցին) Հողում և բուն Աղվանքում Եղիշայի կատարած ողջ աշխատանքը եզրափակում է միայն մեկ, համորեն դարձվածքով. «ի տեղիս տեղիս զբազումս աշակերտեալ ծանոյց զփրկութիւնն»՝ չհիշատակելով նրա գործունեության և ոչ մի ստույգ աշխարհագրական վայր և, վտխարենը, համեմատական մանրամասնությամբ է կանգ առնում Սահառ քաղաքում, Գիս ավանում և Զերգունի դաշտում նրա իրականացրած գործերի վրա, խոսում այստեղ նահատակվելու և Հոմենքում թաղվելու մասին, այդ վայրերը պարզ ու մեկին տեղադրելով Ուտիքում:

Բայց, չնայած պատմիչի այսքան պարզորոշ տեղեկությանը, ուսումնասիրողները միակարծիք չեն այդ վայրերի տեղադրման հարցում: Նշված վայրերից Սահառ (Սուհառ, Սրհառն, Սհառն) քաղաքը, ըստ Մ. Բարխուտարյանցի երկակի կարծիքի, գտնվում էր Կապաղակ գավառում,[14] կամ նույն Կապաղակ քաղաքն էր:[15] Մակայն, Կաղանկատվացու հաստատուն վկայությամբ, քաղաքը գտնվում էր Ուտիքում՝ Կուրից հարավ, ուստի և ոչ մի տրամաբանությամբ չէր կարող ընկած լինել Կուր գետի հյուսիսում տարածված Կապաղակ գավառում կամ լինել համանուն քաղաքը:[16]

---

[10] *Մ. Կաղանկատուացի*, էջ 11:

[11] Անհավանական չէ, որ Եղիշայի սպանությունը հրահրվել է տեղի քրմերի կողմից և իրականացվել մոլեռանդ կռապաշտների ձեռքով:

[12] *Մ. Կաղանկատուացի*, էջ 11:

[13] *Կիրակոս Գանձակեցի*, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Սեւիթ-Օհանջանյանի, Ե., 1961,էջ 192-194:

[14] *Մ, Բարխուտարեանց*, Աղուանից երկիր, էջ 82:

[15] Նույն տեղում, էջ 254:

[16] Ցավոք, որոշակի հայտնի չէ Սահառի տեղը նաև Ուտիքում: Այն պատմության մեջ հիշատակվում է միայն Եղիշայի հետ կապված հիշյալ իրադարձությունների առիթով, որն էլ խիստ դժվարացնում է նրա իսկական տեղորոշման խնդիրը:

Որքան էլ Կաղանկատվացին մեկից ավելի անգամ շեշտում է, որ Գիսը գտնվել է Ուտիքում, այնուհանդերձ, ուսումնասիրողների կարծիքները տարամիտվում են նաև դրա տեղադրման հարցում: Նրանցից ոմանք Գիսը տեղադրում են Կուրից հյուսիս՝ Կովկաս սարի ստորոտում, Շաքի քաղաքից ոչ հեռու գտնվող Քիշ գյուղի տեղում,[17] ոմանք էլ այն ուղղակի նույնացնում են Շուքի-Նուխի հետ,[18] իսկ մի մասի կարծիքով էլ Գիսը գտնվել է Սինգեչաուրում[19] կամ Կուրի ձախափնյակում՝ Աղվանքի հյուսիս-արևմտյան ծայրամասում:[20] Բայց, միանգամից կարելի է ասել, որ խնդրո առարկա բնակավայրի համար առաջարկված այս բոլոր տեղորոշումները իրական չեն: Այն գտնվել է Ուտիքում և, դատելով Կաղանկատվացու մի քանի անուղղակի տեղեկություններից, ընկած է եղել նրա Ուտի-Առանձնակ գավառում՝ Պարտավ քաղաքից ոչ հեռու:[21]

Մ. Կաղանկատվացին որպես Եղիշայի գործունեության վայրերից մեկն է ցույց տալիս Ջերգունի դաշտը: Վերջինս, Մ. Բարխուտարյանցի կարծիքով, ընդգրկել է ողջ Կապաղակ գավառը,[22] այսինքն, այն կրկին տեղադրվում է Կուրից հյուսիս, որը դարձյալ չի համապատասխանում իրականությանը այնքանով, որքանով, որ մեզ հետաքրքրող դաշտը պարզապես գտնվում էր Կուրից հարավ՝ Ուտիք նահանգում կամ նրա շրջակայքում: Վ. Առաքելյանը դաշտը իրավացիորեն տեղադրում է Կուրի աջափնյակում՝ ԼՂՀ Մարտունու շրջանի արևելյան մասերում:[23] Հիշյալ դաշտում կամ նրանից ոչ այնքան հեռու էր գտնվելու նաև Եղիշայի ծավալած գործունեության կապակցությամբ հիշատակվող վերջին աշխարհագրական վայրը՝ Հոմենքը:[24] Կարելի է, իհարկե, չնչին տեղաշարժումներով վիճարկել նշված տեղադրումների իսկությունը, բայց կարևորն ու հիմնականն այն է, որ հիշատակվող բոլոր վայրերն էլ ընկած են Կուրից հարավ և կազմում են Հայոց երկրի հյուսիս-արևելյան կողմերի կամ Ուտիք-Արցախյան աշխարհի բուն բնակատեղիները: Եվ հենց այս տեղերում Եղիշայի իրականացրած գործունեության շուրջն է, որ պատմիչը ավելի մանրամասն նկարագրություններ ունի, քան Կուրից հյուսիս՝ մինչև Դերբենդ ընկած ավելի ընդարձակ տարածությունում տարած քարոզչական աշխատանքների շուրջ: Ուստի, Կուր գետի հյուսիսում և հարավում Եղիշայի գործունեության մա-

---

[17] *Մ. Չալալյանց*, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մասն Բ, Տփղիս, 1858, էջ 369; *Մ. Բարխուտարյանց*, նշվ. աշխ, էջ 82, 269; *З. И. Ямпольский*, Древняя Албания III—I вв. до н. э., Баку, 1962, с.237.

[18] *А. Е. Крымский*, Страницы из истории северного или Кавказского Азербайджана (Классической Албании). Сборник в честь С.Ф.Ольденбурга, Л., 1934, с. 302; *Մ. Բարխուտարեանց*, Աղուանից երկիր, էջ 82:

[19] *А. Г. Абрамян*, Дешифровка надписей кавказских агван, Е., 1964, с. 49.

[20] *Ф. Мамедова*, նշվ. աշխ,, էջ 224:

[21] Հմմտ. *Մովսես Կաղանկատվացի*, Պատմություն Աղվանից աշխարհի, թարգմ. առաջաբանը և ծանոթ. Վ. Առաքելյանի, Ե., 1969, էջ 277, ծանոթ. 70; *Բ. Ուլուբաբյան*, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ (Քանքեր Երևանի համալսարանի, Ե., 1971, № 1, էջ 176-177):

[22] *Մ. Բարխուտարեանց*, Աղուանից երկիր, էջ 53, 241:

[23] *Մովսես Կաղանկատվացի*, նշվ. աշխ., էջ 277, ծան. 71:

[24] Վ. Առաքելյանը գրում է, որ Հոմենքը «տեղադրվում է դաշտային Դարաբաղում» (տե՛ս նույն տեղում, էջ 278, ծան. 72):

սին պատմիչի այսօրինակ ընդգծված տարբերությամբ իտսելը հանգեցնում է մի անվերապահ եզրակացության, նրա քարոզչության հիմնական ոլորտը Կուրի աջափնյակում ընկած Ուտիք նահանգն էր՝ իր շրջակա վայրերով: Այդպիսի եզրակացության է բերում Կիրակոս Գանձակեցու մի հաղորդումը ևս: Իր աշխատության մեջ խոստանալով հատուկ գլուխ հատկացնել Աղվանից կողմանց լուսավորիչներին՝ նա պարզաբանում է. «զլուսաւորիչս կողմանցն Աղուանից, որպէս զազգայնոց և զհաւատակցաց մերոց, մանաւանդ զի և առաջնորդք նոցա հայալեզուք, հայերէնախոսք յոլովք էին»[25]: Պատմիչը, անշուշտ, նկատի ունի հայոց սրևելից կողմերը, ոչ միայն նրա համար, որ դրանք վաղուց արդեն այդպես (Աղվանից կողմանք) էին կոչվում,[26] այլև այն գիտակցությամբ, որ դրանց բնակիչները հայերին ազգակից ու հավատակիցներ էին, նրանց առաջնորդները՝ հայալեզու և հայերենախոս, որը նույնն է, թե այդ կողմերի բնակիչները պարզապես հայեր էին:

Այսպիսով, երկու կարծիք լինել չի կարող: Եղիշայի գործունեության հիմնական ոլորտը եղել է Ուտիքը՝ նրա Սուհան և Գիս քաղաքները, Զերգունի դաշտում ընկած բնակավայրերը, որոնցից մեկում էլ նա նահատակվեց և թաղվեց նույն կողմերում գտնվող Հոմենք կոչվող վայրում: Իսկ այս բոլոր աշխարհագրական վայրերը կազմել են Հայոց երկրի հյուսիսարևելյան կողմերը կամ Ուտիք-Արցախյան աշխարհը:

Համոզվելով այսպիսի եզրակացության իրավացիության մեջ՝ կարելի է անդրադառնալ այս առնչությամբ Մ. Կաղանկատվացու գործածած «Արևելք» («վիճակ առեալ իւր զարևելս»), «հյուսիսարևելք» («սրևելից հիւսիսոյ»), «սրևելից երկիր» կապակցությունների իմաստին: Աղդբեջանցի հեղինակները, պնդելով, թե պատմիչն այս կապակցությունների տակ հասկացել է Աղվանքը (Երուսաղեմի համեմատությամբ նրա՝ երկրագրորեն քրիստոնեական աշխարհի արևելյան ծայրամասում գտնվելու համար[27]), անվերապահորեն հայտարարում են, թե դա Աղվանից երկիրն է:[28] Եթե ընդունենք, որ ճիշտ են նրանք, ապա, ինչպես տրամաբանորեն կրխի այսպիսի հայտարարությունից, Եղիշան լուսավորած պետք է լիներ Աղվանքի հյուսիսարևելյան կողմերը: Սակայն, ինչպես պարզվեց, սուրբը քարոզչական աշխատանքներ է կատարել հիմնականում Ուտիք նահանգում: Հետևելով նույն տրամաբանությանը՝ կստացվի, որ Ուտիքն է կազմել Աղվանքի հյուսիսարևելյան կողմը, մի հետևություն, որս անհնարին է իրականում, այն պարզ պատճառով, որ Աղվանքի համար ինչ սահմաններ էլ ընդունելու լինենք (թեկուզ և աղդբեջանցի հեղինակների համար ցանկալի ամեն մի սահման) Ուտիքը աշխարհագրորեն երբեք չի կարող լինել նրա

---

[25] *Կ. Գանձակեցի*, էջ 192:

[26] Պատմութիւն Հայոց ի սկզբանէ աշխարհի մինչև զամ տեառն 1784, յօրինեալ ի հայր *Միքայէլ վարդապետէ Չամչեանց*, Ե., 1985, հ. Գ, էջ 131 (նոր էջակալումով): *Ա.Շ.Սնացականյան*, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Ե., 1966 (գրեթե բոլոր էջերում): *Բ. Ա. Ուլուբաբյան*, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Ե., 1975, էջ 39: *Հ. Ս. Սվազյան*, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, էջ 213: *Նույնի՝* Աղվանքը և Սիհրանյան տոհմը, էջ 93-94:

[27] *Ф. Мамедова*, նշվ. աշխ., էջ 224:

[28] Նույն տեղում,էջ 223-224:

հյուսիսարևելքում: Այն Աղվանքի համեմատությամբ ունի իր միանգամայն որոշակի ու հաստատուն տեղը տրամագծորեն նրա հակառակ կողմում՝ հարավ-արևմուտքում: Ուրեմն, Մ. Կաղանկատվացու նշած «Արևելքը» Աղվանքը չէր, այլ մի ուրիշ երկիր, որի հյուսիս-արևելյան կողմերում պետք է գտնվեր Ուտիքը: Վերջինիս աշխարհագրական դիրքով պայմանավորված՝ այդպիսին կարող էր լինել միայն Հայաստանը: Սոսկ նրա հյուսիս-արևելյան կողմը կարող էր ձևավորել այն տարածքը, որն իրոք, ներկազմել էր Հայոց աշխարհի հեռավոր, եզերական նահանգներից մեկը: Հետևաբար, Մ. Կաղանկատվացու համար «Արևելքը» և նրա «կողմանք», «կողմանց» բաղադրիչներով կազմված կապակցությունները կարող էին վերաբերել միայն ու միայն Հայոց Արևելից կողմերին:[29]

Այսպիսով, միանգամայն հիմնավոր կարելի է պնդել, որ Եղիշան լուսավորել է Հայոց աշխարհի հյուսիս-արևելյան կողմերը: Իսկ քանի որ դա այդպես է, ապա կարելի է անել նաև այնպիսի հիմնավոր եզրակացություն, որ Եղիշայի նպատակակետը, դեռևս Երուսաղեմում, եղել է Հայոց աշխարհը, ավելի ստույգ՝ նրա հյուսիս-արևելյան կողմերը: Մեզ այդ մտքին են մղում նաև պատմիչի այն հաղորդումները, թե Եղիշան խուսափել է անցնել Հայաստանով. «խոյս տուեալ ի Հայաստանեայցն»: Եթե նա պետք է անմիջապես Աղվանք մեկներ, ապա հարկ չէր լինելու անպայման Հայաստանով անցնել: Նրա համար դեպի Աղվանք բացվում էր Հայաստանով անցնող ճանապարհին ոչնչով չզիջող այն ուղին, որով նա, ի վերջո, անցավ՝ Երուսաղեմ-Պարսկաստան-Աղվանք, առանց իսկ Հայաստանի հետ առնչվելու: Հայաստանը շրջանցելու պատճառն այն էր, որ նրա նպատակակետը այդ երկրի հյուսիս-արևելյան կողմերն էին, և այնտեղ հասնելը նույն երկրի կենտրոնական շրջաններով՝ վտանգավոր: Ուստի և աչքի առաջ ունենալով իր ուսուցչի տխուր վախճանը՝ Եղիշան ընտրում է ավելի երկար ու շրջանային ճանապարհ՝ իր նպատակակետին հասնելով թիկունքից, այլ երկրներ կտրել-անցնելով: Բայց սա դեռ բոլորը չէ: Հայ մատենագիտության մեջ կա սկզբնաղբյուրային մի ուշագրավ վկայություն, որից ևս պարզվում է, որ Եղիշան այս տեղերում, իրոք, հայտնվել է նպատակադրված: Այդ վկայության համաձայն, նա և Խադ անունով մի ուրիշ, նույնպես ոչ անհայտ, քարոզիչ, «գնացին ի Կողմանս Աղուանից հրամանաւ Թադէոսի և անդ կատարեցան»[30]: Վկայակոչված հաղորդման վերջը՝ «անդ կատարեցան» բառակապակցությամբ, ցույց է տալիս, որ «Կողմանս Աղուանից» արտահայտության տակ հասկացվել է Հայոց արևելից կողմերը, քանզի, ինչպես տեսանք, Եղիշան նահատակվել է հենց հայոց հյուսիս-արևելյան կողմերում՝ Ուտիքում: Ուրեմն, Եղիշան Հայոց արևելից կողմեր է գնացել ոչ թե պատահականորեն, այլ Թադեոս առաքյալի հրամանով: Նույն մտքին է հանգեցնում նաև Խադի հիշատակությունը Եղիշայի հետ կողք-կողքի: Խադը ևս Թադեոսի աշակերտներից էր և քարոզել էր նախ

---

[29] Ուտիքը Արցախի հետ միասին ոչ միայն Մ. Կաղանկատվացու,այլև մեր մյուս հայ պատմիչների կողմից անվանվել է «Հյուսիս-արևելյան կողմեր», «Արևելից կողմեր», «Արևելից երկիր», իսկ տեղի բնակիչները՝ «արևելցիներ» (տե՛ս *Մովսէս Խորենացի*, Պատմութիւն Հայոց, քնն., բնագիրը, և ներածությունը Մ. Աբեղյանի եւ Ս. Հարությունյանի, Ե., 1991, էջ 113; *Կիրակոս Գանձակեցի*, էջ 112, 121, 140 և հաջ.:)

[30] Գիրք թղթոց, Թիֆլիս, 1901, էջ 536:

Մեծ Սյունիքում, ապա Փոքր Սյունիքում, այն է՝ Արցախում և, որպես նրա պաշտամունքի հավերժացում, այստեղ կառուցվել է Խաչբավանք անունով սրբատեղին,[31] որի անվան մեջ ուսումնասիրողները իրավացիորեն տեսնում են Խաղ անունը:[32]

Այսպիսով, Թադեոսի հրամանով կատարված քարոզչական աշխատանքները Ուտիքում (Եղիշա) և Արցախում (Խուզ), ցույց են տալիս, որ Հայոց հյուսիս-արևելյան կողմերը եղել են Մեծ առաքյալի ուշադրության կենտրոնում[33] և այդ պատճառով էլ վերոհիշյալ սրբերի՝ այնտեղ հայտնվելը կրում էր միանգամայն նպատակային բնույթ:

Ի դեպ, հիշյալ կողմերն էլ պատահականորեն չէին ընտրված: Ինչպես մատնանշում են ուսումնասիրողները, մինչ Եղիշայի ինքնուրույն քարոզչական գործունեությունը Հայաստանի կենտրոնական շրջաններում քրիստոնեական գաղափարներն էին տարածում Քրիստոսի առաքյալներից սբ. Թադեոսը,[34] նույն Եղիշայի հետ, Աղբակ գավառում և նրան հարող շրջաններում՝ սբ. Բարդուղիմեոսը՝ Քրիստոսի մյուս առաքյալը,[35] Սյունիքում՝ Եվստաթեոս առաքյալը,[36] որը փոխարինել էր Բարդուղիմեոսին:[37] Բաց էին

---

[31] Խաչբավանքը հայ ճարտարապետական նշանավոր կոթողներից է, գտնվում է Մարտակերտի շրջանում՝ Թարթառ գետի աջ ափին: Այդ մասին մանրամասն տե՛ս *Մ. Բարխուտարեանց*, Արցախ, Բաքու, 1895, էջ 193-197; *Շ. Մ. Մկրտչյան*, Լեռնային Ղարաբաղի պատմա-ճարտարապետական հուշարձաններ, Ե.,1980, էջ 44-46:

[32] *Մ. Բարխուտարեանց*, Պատմություն Աղվանից, հ. Ա, Վաղարշապատ, 1902, էջ 56; *Մ. Օրմանյան*, Ազգապատում, հ. Ա, Կոստանդնուպոլիս, 1912, էջ 46:

[33] Տվյալներ կան, որ ինքը՝ սուրբ Թադեոսը ևս եղել է նշված կողմերում և քարոզչական աշխատանքներ տարել: Թերևս այստեղից էլ գալիս է նրա շահագրգռվածությունը խնդրո առարկա երկրամասի քրիստոնեացման հարցում:

[34] *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան*, Հայոց եկեղեցին, Ե., 1993, էջ 24:

[35] Նույն տեղում, էջ 23:

[36] Նույն տեղում, էջ 27: Ավանդությունը այս Եվսաթեոսի անվան հետ է կապում Սյունիքի հայրապետանոց Տաթևի վանքի անվանումը, որտեղ նահատակվելուց հետո թաղվել է նա (Եվստաթե-Ստաթև-Տաթև):

[37] Որ Բարդուղիմեոսը քարոզել է Սյունիքում, պատմում է Ստ. Օրբելյանը: Ըստ նրա, Բարդուղիմեոսը, դուրս գալով Պարսկաստանից, Ատրպատականի վրայով անցել է Սյունիք և քարոզել նրա Որդվատ (այժմ՝ Օրդուբադ) գյուղում, Արևիք, Բաղք և Գողթն գավառներում (տե՛ս Պատմութիւն նահանգին Սիսական, արարեալ *Մատթէոսի Օրբէլեան, արքեպիսկոպոսի* Սիւնեաց, Թիֆլիս, 1910, էջ. 21): Ընդգծելով Բարդուղիմեոսի գործունեությունը Սյունիքում՝ Սյունյաց պատմիչը դա մեկնաբանել է այնպես, թե «հայաստանցիներից» նախ հավատացյալ դարձան սյունեցիները. «քան զՀայասանեայս նախահաւատ երեւեցան սոքա (սյունեցիները-Հ. Ս.)» (տե՛ս *Ստ. Օրբելեան*, էջ 21, նաև՝ *Մատթէոս Օրբելյան*, Սյունիքի պատմություն, թարգմ., ներածությունը և ծանոթ. Ա. Ա. Աբրահամյանի, Ե., 1986, էջ 76): Ստ. Օրբելյանի այս հաղորդումը Ֆ. Մամեդովայի գրչի տակ դարձել է. «Ավելի շուտ քան Հայաստանի բնակչությունը սրանք (սյունեցիները) դարձան առաջին հավատացյալները (раньше, чем население Армении, эти (сюницы) явились первыми верующими) (տե՛ս Ф. Мамедова, նշվ. աշխ., էջ 222-223): Դրանով նա ցանկանում է Սյունիքը տեսնել Հայաստանի կազմից դուրս, նրա հետ ոչ մի կապ չունեցող երկրամաս՝ Աղվանքի կազմում: Սյունիքը, հայկական մյուս՝ Ուտիք, Արցախ ու Փայտակարան նահանգների հետ մեկտեղ Աղվանից աշխարհի բաղկացուցիչ մասեր համարելը Ֆ. Մամեդովայի սևեռուն նպատակն է, որը կարմիր թելի նման

մնացել Հայոց հյուսիս-արևելյան կողմերը, և սրանք էլ հենց քաժին ընկան Եղիշուին, որն էլ երկրորդ անգամ լինելով Հայաստանում, դարձավ հեռավոր այս կողմերի քարոզիչը:

Լինելով քարոզիչ՝ Եղիշան նաև կառուցեց առաջին եկեղեցին այստեղ՝ Գիսում, որը եղավ Հայոց հյուսիս-արևելյան կողմերի եկեղեցիների ու լուսավորության կենտրոն. «Յայսմ տեղւոջ եղեւ սկիզբն արևելեայցս եկեղեցեացս մայրաքաղաք և լուսատրութեան տեղի», - գրում է Մ. Կաղանկատվացին:[38]

Ծավալելով ավետարանչական աշխատանք՝ սուրբ Եղիշան, սակայն, հասցրեց լուսավորել «զմասունս ինչ արևելից հիւսիսոյ»[39]: Նա ևս, այնուամենայնիվ, չկարողացավ խույս տալ իր նախորդների ճակատագրից և, ինչպես արդեն նշվել է, Գիսից ոչ հեռու՝ Զերգունի դաշտում, չարչարանոք նահատակվելով, գցվել է Հոմենք կոչվող վայրում գտնվող մի վտսը:[40]

Համոզվելով, որ Եղիշայի հիմնական նպատակակետը և գործունեության ոլորտը Հայոց հյուսիսարևելյան կողմերն էին, այնուամենայնիվ, չի կարելի անտեսել այն փաստը, որ հենց նա էր նաև այն առաքյալը, որը դարձավ քրիստոնեության առաջին գաղափարախոսը Աղվանքում (և Չողում): Մ. Կաղանկատվացին պատմում է, որ Եղիշան Հայաստան ուղևորվելիս ընտրել է երկար ու շրջանային ճանապարհ՝ Պարսկաստանից անցնելով Ատրպատական, իսկ այստեղից Չող, որտեղից էլ՝ Ուտիք: Չողից Ուտիք տանող ճանապարհը անցնում էր միայն ու միայն Աղվանքի վրայով և Եղիշան էլ, այլ ընթացուղի չունենալով, մինչև Ուտիք հասնելը պետք է անցներ Աղվանքով: Եվ քանի որ, Մ. Կաղանկատվացու վկայությամբ, սուրբն իր ճանապարհին ընկած բոլոր վայրերում քարոզչական գործունեություն է վարել՝ «սկիզբն առնէ (Եղիշան-Հ. Ս.) քարոզութեան ի Չողայ և ի տեղիս տեղիս զբազումս աշակերտեալ ծանոյց զփրկութիւնս», ուրեմն լու-

---

անցնում է նրա հայտնի աշխատության միջով: Միաժամանակ, կարծում ենք, որ ճիշտ չէ նաև ինքը՝ Ստ. Օրբելյանն իր այս հաղորդմամբ: Նրա իսկ տվյալներով, սբ. Բարդուղիմեոսը քարոզել է Սյունիքում՝ Թադեոսից հետո, ուստի և նրա միջոցով հավատացյալ դարձած սյունեցիները չէին կարող լինել առաջինները Հայաստանում: Դա կնշանակի անտեսել սբ. Թադեոսի գործունեությունը:

[38] *Մ. Կաղանկատվացի*, էջ 10: Այս տեղեկությունը ևս, Ֆ. Մամեդովայի գրչի տակ աղավաղվելով, ստացել է այլ մեկնաբանություն, ըստ որի, Գիսում կառուցված եկեղեցին իբրև թե, առաջինն էր ամբողջ Անդրկովկասում (տե՛ս *Ф.Мамедова*, նշվ. աշխ., էջ 224): Բայց դա ճիշտ չէ: Ստ. Օրբելյանի հաղորդման համաձայն, մինչ Գիսում եկեղեցի կառուցվելը, Սյունիքում՝ Գողթնում, եկեղեցի, իսկ Մաղարթում նաև վանք է հիմնել Բարդուղիմեոսը (տե՛ս *Ստ. Օրբելյան*, էջ 211-341): Գիսում կառուցված եկեղեցին առաջինն էր Հայոց արևելից կողմանց համար, որն էլ մատնանշել է Մ. Կաղանկատվացին ինչպես բերված վկայության մեջ,այնպես էլ այլուր: «Առաջինն մայր եկեղեցեացն արևելեայց Գիսոյ եկեղեցին նորին (Եղիշայէ-Հ. Ս.) հիմնադրեալ (*Մ. Կաղանկատուացի*, էջ 274-275):

[39] *Մ. Կաղանկատուացի*, էջ 14:

[40] Եղիշայի նահատակվելուց երկար տարիներ անց, ըստ Կաղանկատվացու, հայտնաբերվում են նրա նշխարները, որոնք տարվում են նախ Ռաեկան սվանում գտնվող վանքը (այժմյան Հռոեկա վանքը ԼՂՀ Մարտակերտի շրջանի Թալիշ գյուղի մոտ), ապա Ներսմիհրի միաբանություն կամ Ջրվշտիկ վանք, որը հայտնի է նաև Եղիշե առաքյալի վանք անունով, իսկ էլի տարիներ անց Աղվանից Վաչագան Գ Բարեպաշտ թագավորը նրա նահատակության վայրում՝ վասի վրա մի հուշասյուն է կանգնեցնում (նույն տեղում, էջ 12):

սավորել է նաև Աղվանից այս աշխարհը, որտեղով անցել է նա: Որ բուն Աղվանքում ևս Եղիշան քարոզչական աշխատանքներ է տարել, ցույց են տալիս նրան նվիրված սրբատեղիներն այս տարածքում, մասնավորապես Սինգեչաուրում[41] և Կուտկաշենի շրջանում, որը ուխտատեղի է դարձել ոչ միայն քրիստոնյաների, այլև մահմեդականների համար:[42] Ուստի, միանգամայն ճշմարիտ է այն կարծիքը, որ Եղիշան է եղել այն առաջին քարոզիչը, որն Աղվանքում հիմք է դրել քրիստոնեական գաղափարախոսությունը: Իզուր չէ, որ ավանդությունը նրան է համարում Աղվանքի առաջին հայրապետը:

Բայց և, ինչպես պարզվեց մեր այս ուսումնասիրությունից, նա Աղվանքում հայտնվել էր ոչ թե այստեղ քրիստոնեություն տարածելու հատուկ նպատակով այլ հանգամանքների բերումով և, օգտագործելով պատեհ սահիքը, իր առաքելությանը հարիր գործունեություն ծավալել: Նույնը կարելի է ասել նաև Մասքթաց երկրում նրա հայտնվելու և քրիստոնեության տարածման համար քարոզչական աշխատանքներ կատարելու մասին:

Աղբյուրների վկայությամբ, Եղիշան այդ գաղափարախոսության արմատավորման համար շատերին է աշակերտ դարձրել և, անկասկած, հիմնել քրիստոնեական համայնքներ, որոնցում աշխատանքներ են կատարվել նշված երկրներում նոր ուսմունքի հաստատման համար:

Այսպիսով, Եղիշան հիմնականում Ուտիք-Արցախյան աշխարհի լուսավորիչն է: Այս ստումով նա հավասարապես կարող է դասվել հայ առաքելական եկեղեցու հիմնադիրներ Թադեոս և Բարդուղիմեոս սրբերի կողքին և նրանց նման մեծարվել որպես Հայաստան երկրի լուսավորիչներից մեկը:

Դեպի Հայոց հյուսիս-արևելյան կողմեր կատարած իր այս առաքելության բերումով նա, միաժամանակ, դարձել է Չորս երկրի ու Աղվանից աշխարհի առաջին առաքյալն ու քրիստոնեության գաղափարախոսը: Որ Եղիշան լուսավորել է երեք, միմյանցից տարբեր երկրներ, ժամանակին ցույց են տվել նաև մեր հայ մատենագիրները: Այսպես. X դ. պատմիչ Մովսես Դասխուրանցին, շարունակելով Կաղանկատույք գյուղից իր անվանակցի աշխատությունը, Եղիշայի մասին արձանագրում է. «Սա (Եղիշան-Հ. Ս.) եկն լուսավորիչ երից աշխարհացս՝ Չորայ, Լփնաց և Աղուանից»[43], որտեղ Չորը Մասքթաց երկիրն է, Լփինքը՝ բուն Աղվանքը,[44] իսկ Աղվանքը՝ Հայոց հյուսիս-արևելյան կողմերը:

---

[41] *А. А. Абрамян*, նշվ. աշխ., էջ 47:

[42] Մ. Բարխուտարեանց, Աղուանից երկիր..., էջ 256, *Р. Б. Геюшев*, նշվ. աշխ., էջ 26:

[43] *Կաղանկատուացի*, էջ 342: Այս հանգամանքն էլ, հավանաբար, հիմք տվեց, որ Աղվանից հետագա կաթողիկոսները սովորություն դարձնեն իրենց հանձնարարական թղթերի վրա գրել. «Աղուանից, Լփնաց և Չորայ կաթողիկոսի» (տե՛ս նույն տեղում, էջ 343):

[44] Ուսումնասիրողները «Լփինք» տեղանվան մեջ տեսնում են «Ալբանիա» աշխարհագրական անվան կրճատված ձևը [տե՛ս *И.Шопен*, Новые заметки на древние истории Кавказа и его обитателей, СПб., 1866, с. 373. *С. В. Юшков*, К вопросу о границах Древней Албании (Исторические записки АН СССР, т. 1, М., 1937, с. 138); *С. Т. Еремян*, Моисеи Каланкатуйский о посольстве албанского князя Вараз—Трда—та к хазарскому хакану Алп—Илитверу (Записки Института восто—коведения АН СССР, т. VII, М. Л., 1939, с. 149)].

# СВ. ЕЛИША – ПРОСВЕТИТЕЛЬ СЕВЕРО-ВОСТОЧНЫХ КРАЕВ ВЕЛИКОЙ АРМЕНИИ, СТРАНЫ ЧОРА И АЛУАНКА

Г. С. СВАЗЯН


## Резюме

Благодаря проповеднической деятельности ученика апостола Фаддея – св. Елиша христианство проникло в Алуанк, и св. Елиша по праву считают первым просветителем Алуанской страны. Св. Елиша занимался просветительством в трех различных странах: северо-восточном крае Великой Армении, странах Чора и Алуанк. Но изначальной целью св. Елиша было просвещение именно северо-восточных краев. Об этом свидетельствует то, что М. Каланкатуаци, рассказывая о деятельности св. Елиша в странах Чора и Алуанк, ограничивается общей фразой ("в разных местах учил он многих, возвещая о спасении") и, наоборот, подробно останавливается на его деятельности в районе реки Куры, на ее правом берегу, а именно в городах Сргарн и Гис, долине Зергуни и местечке Гоменк, которые локализуются в армянской области Утик и его окрестностях. Доказательством вышесказанного может служить и то, что св. Елиша дошел до Утика не кратчайшим путем - по центральным областям Армении, а выбрал длинную круговую дорогу, минуя Армению, идя к своей конечной цели через страны Чора и Алуанк. Если бы его целью был Алуанк, то ему незачем было бы миновать Армению.

Кстати, не случайно он выбрал себе удел "Восток", т. е. северо-восточные края Великой Армении. Апостолы Фаддей и Варфоломей до него занимались просветительством в центральных частях Великой Армении.

Таким образом, св. Елиша прежде всего выступает как просветитель северо-восточных краев Великой Армении, являясь тем самым наряду с апостолами Фаддеем и Варфоломеем одним из просветителей Великой Армении и в то же время Алуанка и Чора.